

ԲԱԺԱՆՈ՞՞ՅԳՐՈՒԹԻՒՆ
 Պուլկարիոյ համար
 Տարեկան 12 Ֆր.
 Վեցամսեայ 6 »
 Արտասահմանի համար Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Ամերիկայի համար
 Տարեկան 3 ֆր.
 Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Իսանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ. է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ. է. երեքին առաջին անգամներու համար 20 օլյ գեղջ կը ղրայ :

Պուլկարիոյ համար ձեռքի (15 ՍԱՆԹԻՄ)
 Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ՊԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԿՇԱԲԻՆ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ

Отговорникъ: Д-ръ Никола Бакърджиѳвъ

R. P. Kalémecarian
 Mechitharistangasse W. 4
 Vienne
 (Autriche)

Շառնակ եւ դրամ դրկն
 Շրագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна

Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չեմ տրուի

Արտասահմանի համար ձեռքի

(20 ՍԱՆԹԻՄ)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր Զի ՎՃԱՐՈՂ

ԲԱԺԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ

Շարժումի տարիշրջանին 10րդ ամիսն է որ կը լրանայ, ու դեռ բազմաթիւ բաժանորդներ սանդիմ ձր իսկ չեն բարեհաճած վճարելու: Այդ բաժանորդները արգարանալու ոչ մէկ միջոց ունին, որովհետեւ իրենց յօժարութեամբ են ստացած:

Եւստի որ մը պարտաւոր չէ ամէն ժամանակ իր բաժանորդներուն յիշեցնելու իրենց պարտքը: Քանի որ թերթը կը ստանան պէտք է որ իրենց բաժնեգիրն ալ վճարեն: Պարտաճանաչութեան ամենասարական գիտակցութիւնը ունեցող անձը կը զգայ թէ թերթը կանխիկ ծախքեր ունի, զորս հայթայթելու համար, միակ աղբիւրը բաժնեգիրներն են: Անտարբերներու հանդէպ վարուելու կերպը գիտենք, բայց դեռ քիչ մըն ալ կը սպասենք, յուսալով որ, այլեւս բաժանորդները պիտի ըմբռնեն խմբագրութեանս դրամի ստիպողական պէտքը, քանի որ հիմա թուրքերէն յաւելուած հանելու համար, արդէն հարկադրուած ենք նոր ծախքերու մէջ մտնել:

Իսկ նոր բաժանորդ գրուողներուն համար միանգամ ընդ միշտ կը յայտարարենք թէ, պէտք է իրենց հասցէին հետ թերթին բաժնեգիրն ալ զրկեն, առանց որուն թերթը չուղարկուի:

ԽՐԱԽՈՅՍԸ

Անհատական կամ հանրային ձեռնարկ մը աւելի յաջող աւելի բարգաւաճ պայմաններու մէջ կը դրուի, երբ ձեռնարկողն մերթ ընդ մերթ իրեն խթան ունենայ խրախոյսը:

Նիւթական և բարոյական խրախոյսը հանճարին սնունդ տուող միակ տարրն է, ըսուած է: Այս խօսքը իր մէջ կը պարունակէ խորիմաստ ճշգրութիւն մը:

Առնենք մասնաւորապէս մասնագրական ճիւղն, որուն ճոխացմանը ու զարգացումին հա-

մար աշխատող լայնահանճար մշակները ներգործուած ու ազդուած են մեծապէս անոր ներշնչող թելադրիչ ոգիէն:

Աթէնք ու Հոռոմ, որ Եւրոպական ճոխ մատենագրութեան ծնունդ տուին, խրախոյսին ազդեցութեան արժէքը գիտցողներուն նախակարապետները կը հանդիսանան պատմութեան մէջ:

Անոնք գիտէին խրախոսել նիւթապէս և բարոյապէս իրենց Արիստի ու Աթենասի յաջող ու ճարտար զաւկները:

Հերոդոտոսի պատմութեան զրքին հրապարակային ընթերցումներն, որոնք կը վերջանային որոտնդոտ ծափահարութիւններով, խրախոսիչ, ոգեւորիչ խօսքերով թուկիտիտէս մը յառաջ բերին: Եսքիլիոսի ողբերգութեանց յաջողութիւնները Սօփոքլը և Եւրիպիտէս երեւան հանցին:

Վերգիլիոս, իր թագապսակ մեկենասի ոգեւորիչ տաք շունչի ազդեցութեան տակ իր անմահ ենէականը տողեց, Լուի Ժոզի օրով Գոռնէյլ, Ռասին, Մոլիէր թատերգութիւնը ծաղկեցուցին, Լաֆօնտէն ու Պուալօ բանաստեղծութեան նոր ոգի ու թռիչ տուին, Պուրէ, Ֆէնէլօն պերճախօսութեան անզուգական տրպարներ հանդիսացան:

Խրախոյսը վերէն կը բղխէր այն ատեն երբ գասակարգի խնդիրը կար, ու այն մատենագրական բոլոր արտագրութիւնները, գրական, ողբերգական, դիւցապներգական կընդգրկեն մասնաւորապէս բարձր գասակարգի բարքերը, փառքերն, առաքինութիւններն, կրքերն ու հեշտութիւնները: Սակայն երբ յառաջագիմութեան անյղի օրէնքով, ինչ որ կապացուցանէ բացայայտօրէն պատմութիւնը, ժողովուրդը հետզհետէ իր անգոսնուած ու բռնաբարուած իրաւունքներուն աէրը հարձաւ, նախապաշարուներն ինկան, երբ ժողովուրդը, երբեմնի մարդկութեան աւելորդ ու անպէտ համարուած մըրը, իր արժանի տեղը գրաւեց, և կատարելապէս

զգացուեցաւ թէ՛ անիկա կը կազմէ մարդկութեան շիղն ու հոգին, որոշապէս տեսնուեցաւ թէ՛ անիկա ալ ունի իր գեթաղգ ու երջանիկ յեղաշրջումները, կեանքի ամէն նուրբ ու կոշտ երանքները, բանաստեղծական ու բարոյական հրահանգներով փռլի, գրագէտները իրենց մտածման առարկան դարձուցին ժողովուրդը:

Ահա այն ատեն սկսաւ գրական նոր յեղաշրջում մը: Խրախոյսը այս անգամ վարէն ժողովուրդին կողմէն կուգար:

Վօլտէր և Տիտրօ հասարակաց կեանքէն աւնուած իրողութիւններ մէջտեղ նետեցին և քաղաքացիի սրտի յոյզերով ցնցեցին ազնուապետական գասակարգը: Կէօթէ և Նիլլէր ժողովրդական թատրոնը կանգնեցին, Հիւկօ, ժողովրդական անման բանաստեղծը, ժողովրդական ցաւերը նկարագրեց սրտայոյզ շեշտերով, Զօլան Ռուկօն-Մաքարներու շարքը հրատարակեց ու կը հրատարակէ:

Սակայն եթէ մեր մատենագրութեան վրայ թեթեւ ակնարկ մը նետենք, ցաւօք պիտի խոստովանինք թէ՛ չենք ունեցած թագապսակ գրուիւններ և իշխաններ, որոնք գիտցած ըլլան խրախոսել մեր մտքի մշակները: Միայն ունեցանք Վաւաշապուհ մը, անպատին մէջ օվասիս մը որ սատար հանդիսացաւ Մեսրոպի և Սահակին, ոսկեգարու գրական շարժումի երկու բեւեռներուն:

Պղնձի, երկաթի ու խեցիի ամուլ գարերէն ետք՝ առանց մանրամասնութեանց մէջ մանեւու, յայտնի է որ ունեցանք ոչ սակաւ գրագէտներ թէ Ռուսահայ և թէ Թրքահայ, որոնք աշխարհաբառ լեզուն ստեղծեցին, կոկեցին ու կազմեցին և ինքնագիր ու թարգմանածոյ ընտիր երկասերութիւնով բաականաչափ ճոխացուցին մեր մատենագրութիւնը, սակայն բարոյական և նիւթական խրախոյսէն զուրկ մնացին անոնք:

Բաղաքական աննպաստ կացու-

թեան թերեւս վերագրուի այս ներշնչող ու թելադրիչ ոգիին պակասը մեր մէջ, լաւ ընդունինք: Սակայն այսօր հայութիւնը արտասահմանի մէջ ամէն կաշկանդումներէ ազատ, կը վաշել խօսելու, գրելու և մտածելու կատարեալ ազատութիւն, սակայն տխուր է խոստովանիլ, չէ՛ զգացած խրախոյսին մատուցած ամենամեծ օգուտները:

Արտասահմանի հայ ժողովուրդը, գիտցի՛ր խրախոսել նիւթապէս և բարոյապէս գրչի ու մտքի անխոնջ ու անվհատ մշակները, որով մտաւորական յառաջգիմութեան նոր շրջան մը բացած՝ պիտի սատարես մեծապէս քու ապագայ վերածնութեանդ գործին, վասն զի հոս արտասահմանի մէջ զէնքի տեղ գրիչ պէտք է քեզի և ռուսի տեղ խօսք:

ԱԻՕ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 8 Դեկտեմբեր

Բօշաները դռնէ դուռ ինկած սէլէներ, մաղեր կը ծախեն, հաց կը մուրան: Բօշայ մը որչափ նեղ պարագային մէջ ըլլայ, չի խոստովանիր, չի ըսեր որ ինքը բօշայ է. այլ միշտ կը պնդէ որ ինքը «մաղագործ» է: Իսկ հայ-«մաղագործը» երբէք չի ըսեր «ես կերթամ մուրալու», ոչ, այլ ես կերթամ «մանկելու» այսինքն «պտոյտի»:

Պետութիւններ ալ կան, որ բօշայ են բառին բուն իմաստով: Բաղաքավար ըլլանք, բօշայ-պետութիւն չըսենք, այլ «մաղագործ»-պետութիւն կոչենք ատանկները:

Ու Աստուծու օրհնած (կարգայ «անիծած») Թուրքիան ալ մաղագործ պետութիւն մըն է այսօր: Երբ Պուլկարիա կամ Սերպիա «մաղագործութիւն» կընէ, «մանկելու» կելլայ Եւրոպական հրապարակները քանի մը տասնեակ միլիոն ֆրանք փոխառութիւն մը ճանկելու՝ զարմանալու չէ: 20 տարուան կարճ կեանքի մը մէջ

Մուշ, 18 Նոյեմբեր

Սիրելի հօր եղբայր,

Գիտեմ վշտացած էք շուտ շուտ ձեր նամակներուն չիպատասխանելուս չէ, հօր եղբայր չէ, մի վշտանաք, այլ քիչ մը համբերեցէք եւ տեսէք թէ ինչ զրուծեան մէջ կը գտնուինք, այն ժամանակ դուք ձեր մէջ կրնաք դատել թէ ինչ է պատճառը:

Հօր եղբայր, յոյսերնիս ամեն տեղէ կտրած, թշուառութիւն վերջին ծայր հասած, չըկայ ընտանիք մը իսկ մեր գաւառի մէջ, որ ապրելու միջոցներէ զուրկ չըլլայ: Իբրեւ հրաշք պիտի ընդունէինք, երբ տեսնէինք որ ո՛ր եւ է անհաստ մը իսկ կրնար գոնէ մէկ երկու ամիսներ իր աշխատութեան արդիւնքով ապրիլ հարստահարութիւնը ըսես, կառավարութեան եւ թէ քրդած կողմէն սովորական բան դարձած է, քանի տարիներէ ի վեր, այն ալ գաղանարար Առանց բացառութեան կողմուտով, առեւանգում եւ մարդասպանութիւն ի կատար հասած, չիկայ օր մը որ թուածներէս մէկը տեղի չունենայ, արդէն առանց խտրութեան, ընտանեկան ամէն սրբութիւններն խաղտուած է, ուր որ գեղեցիկ կին կամ աղջիկ մը կայ, այլ եւս անոր հետ ամեն բան վերջացած է, քրտրի կամ թուրքի վայրենակաւ վաճառութեան գործիք դարձած է, կամ պէտք է գտնուայ, որպէս զի իր գոյութիւն կըրնայ քաշ տալ, մի խօսքով կատարեալ դժոխք մըն է դարձած հայրենիքնիս: արդէն գիւղ ճամբորդել անկարելի է հայր մը համար, չըկայ մէկը որ համարձակի այդ ըմբոստ քայլը առնուլ ու անվնաս յետս վերադարձնել:

Երախայ-պետութիւն մը Պուլկարի մը՝ այնչափ երկաթուղիներ շինեց, որչափ ամբողջ թրքական լայնածաւալ կայսրութիւնը չունի: այնչափ դպրոցներ կանգնեցուց, որչափ Երևանը թիւրք խելագատակը երեւակայել անգամ չի կրնար: Աւս ամէնը 20 տարուան մէջ 3—4 միլիոն հարկատուներու լուծանքով, Ինական է ուրեմն որ ատանկ փոքր ու աղքատ պետութիւն մը մանկելու ելլայ: Աս «հերոսական մանկել» է: Չափէն աւելի ճիգեր կընէ իր ներքին կեանքը առաջ քշելու, շրջապատող դաշտան կառավարութիւնները զինքը յարգելու ստիպելու եւ քիչիկ մըն ալ «կրտսեր եղբօրը», արիւնքամ Մակեդոնիոյ օգնութեան ձեռք կարկառելու նեղ պարագային:

«Մանկէ» Պուլկարի, բոշայութիւն ըրէ, քու քայլը հերոսական է, դուն ծանակի առարկայ էս ըլլար:

Բայց ինչ կրնէք լայնածաւալ 20—25 միլիոն բնակիչ ունեցող, բարեբեր ու հարուստ երկիրով պետութեան մը, երբ ան ալ «մաղաղօրդ» ըլլայ, օրը 12 ժամ «մանկելու» ելլայ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԹՈՂՏՈՒՆ ԱՎՆԱՐԿՆԵՐ

Կրնան թէ մարդ էակը օրուան քան եւ չորս ժամերուն մէջ ունի ժամ մը բարեգործութիւններ ընելու եւ ժամ մըն ալ անխնայութիւններ, խեղճութիւններ, անպիտանութիւններ եւ չարքներ գործելու: հետեւաբար, կրնան, պէտք է աղօթել որ այդ ժամերուն առաջինը ցորեկ աստի պատահի եւ երկրորդը՝ դիւր ժամանակ որպէս զի անոր յուր աղօթքներէն զերծ մնալով վնասներ կամ անմիտ արարքներ առաջ չգան:

Չը գիտենք թէ ո՛րքան ճշմարիտ է այս ենթադրութիւնը, սակայն սատոյք է որ մարդը ունի իր պարզապ վայրկեանները, որոնց միջոցին ուղիղ բանակասութիւնը անգամաւ լծուած կը գտնուի, միտքը մէկ կէտի վրայ միայն սեւեռած է եւ ուղեղը ու սիրտը միասին գործելէ հրաժարած են:

անոր մէջն է, անոր կթան կոմիս ստրուկն է՝ քրքիչիս հետ կեղւան արտասուքի շիթեր, աղի կաթիլներ ալ:

Աւ կը մանկէ մաղաղօրդ թուրքիան, իր գլխուն ունենալով 50—60 միլիոն ոսկիէ աւելի դանձեր դիզած իր մաղաղօրդ պետ Համիրով:

Եթէ թուրքիա կը մանկէ օրը 12 անգամ, իմացէք որ 11 անգամը օջայական, մուրացկի ստոր արհեստն է ո՛ր, կը գործածէ ստակ կը մանկէ եւ միայն մէկ անգամն է որ տարբեր բան մը կը մանկէ:

Բամազանը կը մտնեայ, դէթ ամսական մը վճարելու է պաշտօնեաներուն, փաշաներուն, պէյերուն... րոտեսական փոհմակին ամսականը միշտ կայ, չի ստացողները քաղաքացիական զինուորական, կրթական, արդարութեան եւ այլ պաշտօնեաներն են:

Հանցուցեալ Պարոնեանի ըսածին պէս՝ թուրքիա իր պաշտօնեաներուն ամսականը իրստ կանոնադր կուտայ՝ եթէ տարին լոկ երկու ամիս ունենայ:

Ամսական մը պէտք է տալ բայց ստակ չիկայ:

Մաղաղօրդ պետ Համիր կուզէ ընդօրինակել կիրիս կայսեր ամէն մէկ քայլը: Բայց առակը կըրէ, եթէ հաւը սագին նայելու ըլլայ եւ անոր ձուր մեծութեամբ ձու ածէ յետոյքը կը

պատուի: Բիչ մը Սինիքական առակ է, բայց ժողովրդական է, ընթերցող ներէ:

Համիր ալ կիրիսով կը նայի եւ անոր հակիթներուն պէս խոշոր հակիթներ կուզէ ածել: Բայց պատուող թուրքիան է, փճացողը երկիրն է, հպատակներն են...

Համիր 8 հատ Աղամայ տարուան գոսոցած մարտանաւերը զրկեց Գիլ եւ ձէնով վերանորոգելու: նոր պայմանագիր մը կնքեց մարդկութեան արիւնի հեղեղներ կաղմբու գործիք շինող Բուսիթի թնթանթի ձուլարանին հետ:

Կիրիսով քայլերով կերթանք բայց «պաճախներնիս» կը պատուին: 16 թնթա՛ն օթածիք վաշտու համար, Բուսիթի նոր թնթանթներ ապսպրուեցան ուղիղ «երկուքուկէս» միլիոն ֆրանքի արժէքով, բայց նորէն ստակ չիկայ:

Անցեալ անգամ գրած էի որ Ամբրիկացիներուն ալ նաւ մը ապսպրեցինք եւ անոր մէջ կէս միլիոն ֆր. տուգանքնիս ալ հաշուեցին: Եկուր տես, որ Անգլիա ալ նորէն ելեր իր հպատակներուն կրած վնասները կուզէ: ուս Ամբրիկացիներուն ուղածին պէս կէս միլիոն չէ. այլ 65—70 հազար ոսկիի կը հասնի—որ ըսել է մէկ ու կէս միլիոնը կանցնի:

(Մնացածը յարողով)

—)(—

կրնան թուաւորել, երբեք չէ կասկած որ իր դրամը օր մը կրնայ կորսուիլ, գրաւուիլ եւ կասկած անգործադրելի մնայ:

Ինչ կարելի է մտածել մարդու մը համար որ իր ամբողջ կեանքը անցուցած է աղբին ճակատագրերը լաւացնելու գործերով եւ այսպիսի անօրինակ կտակ մը կը ձգէ եթէ ոչ ենթադրել չար ժամուն ներշնչման ենթարկուած սխալական մը:

Սամաթիան կը ճանչնանք ամէնքս ալ, փամանակին հոն ծնած են մեր էն լաւագոյն մարդիկներէն ոմանք, հոնկից սկսած է վերածնութեան շրջանը, մաքուր երիտասարդութիւն արտագրած է անկիւս եւ կորովի ու ժերու փունջ մը դեռ մինչեւ վերջերս իր արիւնը թափեց այնքան մեծ հաստատակամութեամբ: Այդ Սամաթիանի մէջն էր որ քանի մը տարիներ առաջ Յակոբեան եղբայրները վերականգնեցին Ս. Գեորգի եկեղեցին երբ աղքատ գեղեկեցիքի պէտքէն աւելի ուրիշ պէտքեր չուէր եւ այսօրուան վիճակէն հետո էր: Այսօր կը լսենք թէ ուրիշ հարուստ մը Բարսեղ Սամաղուլուեան, ուրիշ եկեղեցի մը կը վերաշինէ այն գործին մէկ ուրիշ կողմը եւ այդ գործին համար 1700 ոսկիէն աւելի գումար մը կը ծախէ ի փոխարէն ափ մը հողի՝ թաղուելու համար անոր շրջափակին մէջ եւ անունը քանդակուած տեսնելու՝ սրբավայրին ճակատը:

Ինչու այդ անպէտ գոհողութիւնը քանի մը տուն հայերուն համար ու

րոնք կրնային իրենց մօտակայ եկեղեցին յաճախել երբ անդին հազարաւոր որբեր «անօթի ենք» կաղաղակին եւ 1700 ոսկիով 100 հատ որբեր երեք ամբողջ տարիներ կրնային սնանիլ, խնամուիլ եւ դաստիարակուիլ:

Նոյնքան չի մտածուած գործ մը չէ՞ Բարեղի մէջ մատուց մը շինելու գաղափարը:

Ինչ հարկ միլիոններ ծախել չորս պատերով շէնք մը կառուցանելու համար որ շարժուան մէկ օրը միայն պիտի գործածուի լոկ 30—40 եկեղեցաւորներու աղօթատեղի հայթայթելու համար: Կարելի չէ՞ պահել հիմակուան մատուց իր ձեւին մէջ եւ անոր յատկացուելիք դրամը գործածել որբեր պահելու, այրիներ միսթարելու եւ անդրի հայատանցիին աշխատութիւն հայթայթելու գործին եւ կամ ինչպէս ուրիշ պաշտօնակից մը կըրտը, չի կրնա՞ր այսքան դուրմարով վարժարան մը բանալ Եւրոպայի մէկ անկիւնը, աղաս հողի վրայ եւ հոն զարգացած երիտասարդութիւն մը պատրաստել որոնք մէկ մէկ եկեղեցիի չափ յարգելի պիտի ըլլան մեր աղբին համար:

Ինչու այս ամէնքը, որովհետեւ մարդը ունի իր սարօրինակութեան մէկ ժամը ու այդ ժամը երբեմն ցերեկ ատենին կը հասնի եւ մէկն ալ չը գտնուի որ լաւագոյնին խորհուրդը տայ որպէս զի նուիրատուները սթափին:

Վերջապէս լոյս տեսու լուսիննան

բառարանը, Շատոնց ի վեր ձայնը կառնէինք եւ ինք մէջտեղ չը կար Առաջին հատորը միայն հրատարակելու եւ գինն է 25 ֆրանք, շատ, շատ գիրքատալիլ բառարան մը...

Մենք դեռ չը տեսնեք սակայն կրնան թէ ստուար գործ մըն է, հոյակապ բայց գրաբարխառ է:

Վերջացող, սա վերջացող դարը իր օգուտները ունեցու հայութեան, դոնէ բառարաններ առաւ, բնաշխարհիկի եւ լուսինեանի նման արտարաններ որոնք հրատարակելիներուն քով եւ խմբարատուներուն ու գրավաճառներուն խանութին մէջ միայն գոյութիւններն պահպանեն, մինչեւ որ մեր մէջ այդ տեսակ բառարաններ գործածողները շատնան:

Շատ անգամներ մտածած ենք թէ ինչու արդեօք չորհրդով քերականութիւն մը դեռ չունինք պարզ, դիւրահասկանալի եւ միանգամայն մէթօտիք: մինչդեռ այսօր ուրիշ բանի վրայ պէտք է խորհինք եւ հարցնենք թէ որո՞ւ համար այդքան մեծ բառարանները երբ ժողովուրդը չի պիտի կրնայ օգտուիլ անոնցմէ եւ Հայկականներն նման հնութեան կարգը պիտի անցնին օր մը, եթէ արդէն հրատարակուած օրէն այդ փոքրագրութիւնը ունեցած չեն:

ՍԱՍՔ

—)(—

բարատնակ . եւ այսպէս խեղճ գիւղա-
ցին իր կողոպտուած կէս աւեր պա-
պենական խրճիթին մէջ անօթի եւ
մերկ փակուած . իր ընտանեկան
սրբութիւնը եւ օրհասը կողոպտ . որ
իր աչքի առջեւ ամէն վայրկեան
ուրուականի նման ցոյցուած կը կենայ :
ինչպէս որ գիւղացին . նոյնպէս այ
քաղաքացին այդ վայրագութիւննե-
րէն ազատ չէ :

Փոստահանան ըսես . կարելի չէ
մարդ մօտիկնայ . հայերէն գրու-
թիւններ ամէն ժամանակ կը խու-
զարկուին . շատ քիչ անգամ կը պա-
տահի որ առանց խուզարկութեան
նամակներ դուրս արուին . եթէ կաս-
կածի բան մը նկատուի . այն օր .
վայ այն մարդուն որ փոստախանայի
ետեւէն կամ առջեւէն անցած է . ու
տեսածին անմիջապէս կը ձերբա-
կալուի . նոր չի տեսնուած եւ չի
լսուած ամեն տեսակ գազանութիւն-
ներ ի գործ կը դնեն մինչեւ մեռցը-
նելու աստիճանին հասցնելով . մին-
չեւ որ խեղճը ստիպուած ըսէ թէ
ես դրած եմ կամ թէ այն ինչ տե-
ղէն ինձ համար դրկած են . այն ինչ
այ ինքն գորդ եղած է եւ ոչ ալ այդ
նոր եկած գրութիւն իրեն կը պատ-
կանի : Տեսէք թէ այդ սուտ եւ բռնի
խոստովանութենէն ինչ աղետալի
հետեւանքներ ծագում առնելով դուրս
կուգան . որքան անմեղ մարդիկ
թրքական մութ եւ խոնաւ բանա-
լու զոհ կերթան :

Ահա . հօր եղբայր գլխաւոր պատ-
ճառը մեր չի գրելու . ժողովրդական
առածը կըսէ «գող սիրաբը դող» գի-
տէք թէ ի՞նչու համար այսչափ խիստ
կը վարուին . անոր համար որ կուզեն
առանց ձայնի իրենց ծրագիրը ի գլուխ
հանելու . բոլորիս ջնջել . ատոր հա-
մար ալ ինքն կատաղարութիւնը կը
վախնայ որ . մի գուցէ իրենց գոր-
ծած գազանութիւններն մանրամասն
ձեւով գրուի եւ հաղորդուի ուր որ
անկ է . ու իրենց ատժամանակեայ
ձեւով անհանգստութիւն պատճառէ .
եւ արգելք հանդիսանայ իրենց գոր-
ծած ամեն մէկ գազանութեանը :

Եւ անա այս ցաւոց վրայ ձմեռը
կուգայ պակասի մնացածն լինել .
եւ մեր օրհասն փութացնել : Արդէն
մեր հայրենեաց ձմեռն ձեզ յայտնի
է իր տեղած ձիւնով ու բուքով որ
քանի մը ամիսներ կը տեւէ . ուտե-
լու հաց . հագնելու լւթ եւ վառելու
փայտ չունինք . որ այդ ցուրտին
ու բուքին զիմացրինք : Գիտեմ պիտի
ըսէք թէ մինչեւ այս օրս ի՞նչպէս
կապրէիք . հօր եղբայր . մեր մինչեւ
այսօր ապրելին ուրիշ բան չէր . եթէ
ոչ բնութենէն մեղ շնորհուած այն
բոյսերն որ հրեմն ստոնք քաղելով
ձմեռան մեր անասուններուն կը
կերցնէինք . իսկ այժմ քանի որ կո-
ղպտելով բան մը չը ձգեցին մեզ
դոյութիւննիս պահպանելու համար
հարկադրուեցանք այդ բոյսերով ապ-
րիլ երկար ժամանակ : Այսօր ալ կար-
ծես թէ անէ՞ք կայ վրանիս : Բնու-
թիւն եւս իւր երես դարձուելով .
իւր մեղ շնորհած այդ բարիքներն
ալ կը զրկէ . այլ եւս գուք ինքներդ
քաղապանք թէ ինչ պիտի ըլլայ
մեր վիճակն այդ մեղի սպառնացող
երկու հակառակ հոսանքի մէջտեղն .
առաջին որ սրով եւ սովով կը սպառ-
նայ իսկ երկրորդն . սաստիկ ցուր-
տով եւ բուքով :

Գիտեմ պիտի ըսէք թէ . առաջ-
նորդարանն պաշտօնապէս ինչու
չի բողբեր . իրաւունք ալ ունիք
լսելու . իրաւ կըլլար . բայց անիկայ
ժամանակ մըն էր : Այժմ բոլորովին
նշանակութիւնը ինկած է . ամէն
էնկ զէպքին կը բողբէ պատրիար-

քարան . այդ բողբներուն փոխանակ
բիշ շատէ դոհացում մը տալու մի-
ջոցներ ձեռք առնելու . ընդհակա-
ռակն անխելի մնացած է ու ցարդ կը
մնայ . եւ այդ պատճառաւ շուտրած
կեցած է . ու մեզմէ աւելի կը ճնշուի
եւ կը նեղուի կառավարութենէն :
Պատրիարարանն այդ ամեն բան
տեսնելով մէկտեղ կրկին անտարբեր
կը գտնուի :

Յոյսերնիս ամէն տեղէ կտրելով մի
միայն բազուկներին եւ յեղափո-
խութեան վրայ դրած պէտք է մին-
չեւ վերջին շունջ աշխատիլ . քանի
որ մենք ամէն տեսակէտով կաշկան-
ցուած ենք . եւ չենք կրնար ուզած
քայլերնիս առնուլ . իսկ գուք որ
աջտասանման ազատ հողի վրայ կապ-
րիք եւ ազատ շունջ կը քաշէք . ձեր
պարտականութիւնը ծանր է զէպի
ձեր ընտանեկան պատիւն . որ այսօր
թէ բարոյապէս . թէ նիւթապէս եւ թէ
Ֆիզիքապէս ինկած է . պատիւ կը
պահանջէ եւ «վրէժ վրէժ» կը պո-
ռայ : Այդ ամենակարեւոր խնդրոյն
մասին փոխանակ լրջօրէն խորհելու
կը լսենք որ կուսակցական մտու-
թիւններէ ընտուած . մէկզմէլու ար-
եան ծարաւով զէմ յանդիման զին-
ուած էք . մեր թշնամիի պակաս
ձգածն դուք կատարելագործելու .
ի սէր Աստուծոյ . Հայրենիքի եւ ձեր
ընտանեկան պատւոյն վերջացուցէք
այդ «ոխն ուես»ը որ ժամանակին մեր
տունները քանդեց . ու այս աւուրս
հասցուց . գոնէ անցեալէն օրինակ-
առնելով . վանեցէք ձեր մէջէն այն
գարշելի «ես»ը եւ թողէք այն ներ-
քին երկպառակութեան օպին . եւ
ձեռք ձեռքի տալով միութեամբ եւ
մի հրահանքով գործի սկսեցէք : Այդ-
պէս կը կայանայ մեր փրկութիւնը .
երբ մէկզմէլ չի հասկնամք եւ մէկզ-
մէկու ձայնը չը լսենք . ի՞նչպէս պի-
տի կրնամք մեր թշնամիին հասկցը-
նել . որ կատարեալ կազմակերպու-
բանակով սկսած է մեզ սովով եւ
սրով ջնջել աշխարհէս : Այժմ գրու-
թիւնս վերջացնելով կը խօստանամ
երկրորդին աւելի երկար գրելու .
S .

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

«Բրօ Արմէնիա»ի երկրորդ թիւն
ալ հրապարակ եկաւ : Իրաւցնէ ամ-
բողջ ազգին համակրանքի արժանի
է ձեռնարկը այն մարդոց՝ որոնք
կուզեն հայկական հարցը Եւրոպայի
ժողովրդեան ծանօթացնել իր բոլոր
օրինաւոր հիմքերով եւ վերջ տալ պաշ-
տօնական Եւրոպայի ամօթալի ան-
շարժութեան :

Եւրոպական անկախ մամուլը հա-
մակրական ընդունելութիւն մը ըրած
է այս հանգստին . մասնաւորապէս
«Ուոտ . լա Հանդլան . լա Բըդիդ
Ռէքիւպլիք . լա Սինեալ . Պրանք-
ֆուրդէր Չայթուեկ . լէսպ . Մէր-
քիւր սը Պրանս . Բարդի Ուլրիէր .
լա Բէ բաւ լը Տուուա . լէ Թան Նուլօ»
եւ այլն . եւ այլն :

խայտառակ քննադատութիւններ
«Բրօ Արմէնիա»ի յայտնած ճշմար-
տութեանց ու հրապարակաւ պարզած
իրողութեանց զէմ : Պիտի տեսնենք
որ . կարգ մը դաւաճան ու անխել
գրիչներ պիտի ելլեն գովասանական
զգուելի յօդուածներ մրտաել . ու ամ-
բողջ վարձկան մամուլը միաբերան
պիտի ձայնակցի Սուլթանը փառաբա-
նելու եւ «Բրօ Արմէնիա»ին ազդե-
ցութիւնը չեղբացնելու գործը յա-
ջողցնելու համար :

Սուլթանը անշուշտ առանց վար-
ձատրութեան չի ձգեր իր հաւատա-
րիմ ծառաները . եւ երբեմն երբեմն
մէյմէկ ոսկը կը նետէ անոնց բերնին .
սրպէս զի աւելի եռանդով ու հաւա-
տարմութեամբ իրենց աէրը պաշտ-
պանեն :

Բայց այդ վարձկան մամուլը ի՞նչ
ճիգեր ալ թափէ . պէտք է գիտնայ
որ անկեղծ ու անշահախնդիր սիրտը .
անօրինակելի գազանութեանց զէմ
փրփրած ու արդարութեան դատին
նուիրուած . շատ աւելի յուզիչ ու
զեղեցիկ է եւ աւելի զիրուութեամբ
կը դրաւ սիրտերը . քան թէ կոշտ
ուժին ու վայրագութեանց պաշտպա-
նութեան նուիրուած քար սրտերուն
տգիղ ազդակները : Ու պաշտօնական
մամուլին սառն արհամարհանքին
քով . միշտ պիտի գտնուի Սէվոսին
մը . իտէալ ու զգայուն կնոջ սիրտ
մը . որ ոչ նուազ պաշտօնական ին-
դալութեան Համաժողովին մէջ .
ի լուր աշխարհի պիտի պախարակէ
ընդհանուր խաղաղութեան վրդովիչ
«Մեծ Մարդասպան»ը եւ կենացներ
պիտի առաջարկէ բազմաչարչար հայ
ազգին համար :

«Բրօ Արմէնիա»ն առնելով կը
թարգմանենք այն բաժակաճառը զոր
Տիկ . Սէվոսին ինդալութեան Համա-
ժողովին խնձոյքին առթիւ արտա-
սանած է .

«Կը խմեմ կենացդ . բազմաչարչար
Հայաստան . հազար անգամ արիւնա-
քամ եղած ու հազար անգամ վերա-
ձնած . դու՛ . Եւրոպայի ցածութեան
զոհը . որուն կիները . Սասունի մէջ .
մահը անպատուութենէ գերադասե-
ցին ու անդունդներու մէջ գահավի-
ժեցան . զաւակնին մերկ կուրծքեր-
նուն վրայ սեղմած . . . » :

ՄԵՆԲ ԷԼ ՄԵՐ ՊԱՐՏԲԸ ԿԱՍԱՐԵՆԲ

Եթէ չեմ սխալվում . առաջին
անգամն է որ Եւրոպական մի մեծ
ժողովրդի մի քանի նշանաւոր և
եղակի տաղանդաւոր զաւակներ
համախմբվելով առանձին թերթ
են հրատարակում մի ճնշված ժո-
ղովրդի դատը պաշտպանելու
համար :

Խօսքս «Պրօ Արմէնիա»ի և նրա
խմբագիրներին մասին է : Այդ
բացառիկ իրողութիւնը երեք
գլխաւոր պատճառներ ունի . ա-
ռաջին՝ որ իսկապէս հայ ժողո-
վրդի վիճակը անտանելի է . և
հայերի կողմից նա ներկայացվել
է առանց չափազանցութեան .
երկրորդը՝ որ հայերս իւր ժողո-
վուրդ կարողացել ենք ուշադ-
րութիւն գրաւել . երրորդ՝ որ
«Պրօ Արմէնիա»ի Պարոն խմբագիր-
ները բացի տաղանդաւոր լինե-
լուց և սիրտ ունեն . մարդկու-
թեան ցաւերի առջեւ տրոփող
սրտեր :

«Պրօ Արմէնիա»ն ֆրանսերէն
տառերով հայկական թերթ է . նրա
խմբագիրները իրենց նիւթերը
պէտք է հաւաքեն նաեւ հայերի
միջոցաւ . ուստի այն հայերը .
որոնք միջնորդ պէտք է լինեն
այդ թերթի և հայ ժողովրդի
միջեւ . պարտաւոր են միմիայն
ճիշդ և առանց չափազանցու-
թեան տեղեկութիւններ տալ .
որպէս զի ականաւոր խմբագիր-
ները Եւրոպական հասարակու-
թեան առջեւ կարմրելու տեղիք
չունենան :

«Շարժում» մի անգամ արդէն
չեշտել էր թէ «Պրօ Արմէնիա»ի
երեւան գալովը Սուլթանը ամէն
կերպ պէտք է աշխատի այդ
թերթում գրվածները սուտ հա-
նել . իհարկէ գլխաւորաբար Եւ-
րոպական թերթերի միջոցաւ .
եւ սուլթանական այդ տեսակ
շանքերը ի դերու հանելու ու
նրու պաշտպան Եւրոպական թեր-
թերին յաղթանակել չը տալու
համար ամէն ճիգ պէտք է թա-
փել որ «Պրօ Արմէնիա»ի մէջ
սխալ տեղեկութիւններ . չափա-
զանցութիւններ չը տպագրվեն :

Առհասարակ հայերիս առաջին
շանքը պէտք է լինի որ մեր Եւ-
րոպացի բարեկամները մեզ ճա-
նաչեն իբր ճշմարտախօս . արեւ-
ելեան չափազանցող յատուկ թիւ-
նից զերծ . իսկ դրան կարելի է
հասնել միմիայն մեր գժբաղդու-
թիւնների ճշգրիտ նկարագրու-
թիւնը տալով :

Այս տողերը ինձ գրել դրդեցին
երբեմնի չափազանցութիւնները
որոնք տպագրվեցին զանազան
Եւրոպական թերթերի մէջ և Հայ
ժողովրդին ծաղրի նիւթ դար-
ձրին հայերիս ոչ բարեկամ մա-
մուլի բերանում :

Բարի մարդիկ չափազանցում
էին կարծելով թէ այսպէսով կը
յուզէին Եւրոպայի հասարակական
կարծիքը . այն ինչ եղածները
այնքան շատ էին որ . բարդելը .
աւելացնելը . փոխանակ հայերիս
օգնելու . վնասում էր :

ԼՈՐՏ ՐՈԶՊԵՐԻՆ ԳՐԱԳԷՏ

Յայտնի է որ Անգլիոյ պետա-
կան մարդիկ . երբ քաղաքական
գործերէ ազատ ըլլան . իրենց
ժամանակը կը նուիրեն ուսումնա-
կան և գրական աշխատութիւն-
ներու : Կլատադօն և Սալիզպրի
աշխատութիւններ ունին . զորս
քննադատները շատ բարձր կը
դասեն : Վերջին ժամանակներս
ալ լորտ Բօզպէրի . նախկին նա-
խարարպետ և Կլատադօնէ վեր-
ջը ազատամիտներու ժամանակա-
ւոր պարագլուխը . գիրք մը շա-
րագրած է նաբօլէօն Ա . ի վեր-
ջին օրերուն մասին :

Գիրքը կը պարունակէ նաբօ-
լէօնի կեանքին նկարագրու-

Թիւնը Ս. Հեղինէի կղզիին մէջ : Բողոքերի մեծ համակրանքով կը վերաբերի դէպի նաբոլէօնը և կը դատապարտէ Անգլիոյ վարիչները, որոնք այնչափ խստութեամբ վարուած են իրենց հանճարեղ գերիին հետ :

Հեղինակը սրտանց կը վրդովուի անգլիական նախարարներուն դէմ, որոնք Հուստօն Լօուի պէս անընդունակ, կոշտ ու գոհճիկ մարդ մը նաբոլէօնի վրայ պահպան նշանակած էին : Ատ Հուստօնը ամէն քայլափոխի մէջ նաբոլէօնը կը նախատէ եղբր, բաւականացուցիչ դրամ չի տար եղբր. որով ստիպեց է բանտարկեալը իր արծաթէ դգալները ծախելու : Կայսերական տիտղոսը չէ գործածեր, ուղեր է գիւնիի չափը պակսեցնել եւ այլն : նաբոլէօն կը բնակի եղբր երկու փոքրիկ սենեակի մէջ : Բողոքերի ուրիշ շատ մը նմանօրինակ փաստեր կը բերէ :

Այդ գիրքը մեծ յաջողութիւն գտեր է Պրանսա, Անգլիա, որովհետեւ շատ ճիշդ և մինչեւ հիմա անյայտ փաստեր կը պարունակէ իր մէջ և համակրանքով կը վերաբերի դէպի հանճարեղ Քօրոիքացիին :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Խորէն Ստեփանէի թաղումը տեղի ունեցեր է նոյ. 18ին կէս օրէն վերջ : Թաղման հանդէսը կատարուեր է մեծ շուքով : Շատ տեղերէ պատգամաւորներ եկեր են թէ հոգեւորական և թէ՛ աշխարհական հեռագիրներ և պսակներ ստացուեր են : Ստեփանէի մարմինը Թիֆլիսի Մայր եկեղեցիի շրջափակին մէջ թաղեր են :

— Եգիպտոսի առաջնորդը արդէն մեկնեց է իր պաշտօնատեղին և հեռագրաւ ծանուցեր է տեղւոյն ազգային իշխանութեան :

— Ամերիկայէն Կովկասի Շուշի քաղաքը եկեր է Արաբկիրցի երիտասարդ հայ բժիշկ մը որ կարգ մը հիւանդութիւններ կը բժշկէ, առանց դեղի, հիպնոթիզմով և մազնիսականութեամբ : Երիտասարդին մականունն է Շէքէրան : Շուշիցիները երիտասարդ բժիշկը կամ հրաշագործ մը կը կարծեն, կամ թէ կախարդ :

— Գահիրէի մէջ հաստատուած վանեցիները որ արդէն ութը որը կը պահեն Վարազայ վանքի մէջ հիմա ալ 50 անգլ. սօկի շրջակած են 6 որը եւս պահելու համար :

— Պարսկաստանի «Հակալքուլական ընկերութիւնը» կարճ միջոցի մէջ մեծ յառաջադիմութիւն ըրած է : Անցեալ տարի 26 անգամով գործը սկսաւ Դաւրէթի մէջ, այս տարի 200 անգամ ունի : Մասնաճիւղեր ունի

Մարաշայի, Սալմաստի, Ռարմիոյ մէջ : Դաւրէթի Լիլաւա թաղի վարժարանի և Թիֆլիսի ներսէսեան դպրոցի ուսանողներուն մէջ ևս 25—30 անգամներով մասնաճիւղեր հաստատուած են :

— Մխիթարեան միաբանութիւնը իր հիմնադրութեան 200 ամեակի յորելեանը Պոլսոյ մէջ պիտի կատարէ, որովհետեւ Մխիթար Աբբասայրը առաջին անգամ 1701ին իր միաբանութիւնը Պոլիս հաստատեցէ :

Այս յորելեանը հանդիսաւոր պիտի ըլլայ :

— Եւրոպական թերթերը կը հաղորդեն թէ՛ Մուշի Բաբկէն վարդապետը ազատ արձակուեր է :

— Անցեալ ուրբաթ Սամաթիոյ Թրանվայի փողոցը հայու մը տունէն հրդեհ ծագելով, 5 տուն և 28 խանութ այրեր է : Հրդեհի ծագած տան հայ բնակիչները Ստեփան աղա և իր կինը աղատուելու ճար չի գտնելով, ինքզինքնին պատուհանէն վար նետեր և ծանրապէս վիրաւորուեր են : Երկու դժբաղդները իսկոյն Ազգ. Հիւանդանոց փոխադրեր են :

— Վառնայի երկսեռ Որբախնամը հրապարակաւ շնորհակալութիւն կը յայտնէ Տօպրիշի ազգային վարժարանին Տնօրէնուսուցիչ Տ. Ա. Քուլումճեանի, որ վարժարանին աշակերտներուն և աշակերտուհիներուն մէջ հանգանակութիւն մը կատարելով Որբախնամին 31 Լ. 10 Սն. շըրկած է : Որբախնամը նմանապէս շնորհակալութիւն կը յայտնէ հարսանիքի մը առթիւ հաւաքուած և Տէր Սարգիսի ձեռքով յանձնուած 3 լէվ 65 սանթիմ նուիրատուութեան համար :

— Որբախնամի կանանց ճիւղի ընդհանուր ժողովը անցեալ Կիրակի տեղի ունեցած չէ և յետաձգուած է այս Կիրակիի համար :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Սուլթանը իր խորհրդակիցներով միասին միջոցներ կը խորհի դրամ գտնելու, որպէսզի բամբակահիւ սաթիւ պաշտօնեաներուն գոնէ ամսական մը վճարէ : Պէտք է նաև գոհացում տալ Անգլիացիներու պահանջին, այսինքն վճարել Հայկական կոտորածներու միջոցին Անգլիական հպատակներուն կրած քնաններու փոխարէնը :

— Սուլթանը Գերմանական դեսպանատան պաշտօնեայ մը զրկեր է պատերազմական «Կնէյ-վէնհաու» վարժարան-շրջանաւին խորտակման առթիւ իր ցաւակցութիւնները յայտնելու :

Յետոյ Սուլթանը պատուիրեր է Պալատան պաշտօնեաներէն մէկ քանիին տօներէն վերջը նուագահանդէս տալ ի նպաստ կործանուած նաէն մ'առնողներու ընտանեաց :

— Հոովմի թուրք գեսպանը Բ. Դրան կը հաղորդէ թէ՛ իտալական կառավարութիւնը ոչ մէկ խոստում ըրած է Կրէտէի երկիրն ու իշխանին կրէտական հարցի մասին և երբէք նախաձեռնարկ չի ըլլար : Եթէ ապագային ո և է ուրիշ պետութիւն մը առաջարկ մը ընէ այդ խնդրոյն մասին, Իտալիան միւս պետութիւններու հետ միասին կը զբաղի այդ խնդրով :

Բեթերսպուրկի դեսպանն ալ հանգստացուցեր է Բ. Դուռը հաղորդելով որ Ռուսիա ոչ մէկ խոստում ըրած է երկիրսի :

— Օսմանեան բանակը, կը գրեն թուրք թերթերը, ամէն կերպով իր կատարելութեան հասցնելու համար ամէն օր նոր ջանքեր կը ընեն : Այս անգամ ալ նոր դրութեամբ արագահարուած թնդանօթներ պիտի ապսպրեն, որոնց թիւը 96 պիտի ըլլայ : Երկու թիկնապահներ այդ պատճառաւ Գերմանիա պիտի մեկնին :

— Սելանիկի մէջ ոստիկանութիւնը երևան հաներ է դաւադրութիւն մը որուն հետեւանքով տեղւոյն Ռուսմանական արհեստներու վարժարանը օդը պիտի հանուէր : Կը կարծուի թէ այդ դաւադրութեան հեղինակները Պուլկարներ են, որոնց ռուսմաններու հետ ունեցած հակառակութիւնը յայտնի է :

— Դարձեալ Սելանիկի մէջ թուրք ոստիկանութիւնը յաջողեր է ձերբակալել 12 պուլկար «աւազակներ» : Ասոնց վրայէն գտնուեր են այն տեսակ թուրքեր որոնցմէ կը յայտնուի գործած ոճիրնին :

Չ Ի Ն Ա Ս Ս Ա Ն

Պատրաստուած հաւաքական ծանուցագրին ստորագրուիլը շարժե մը ի վեր կը յետաձգուի Անգլիոյ յարուցած կարգ մը առարկութեանց պատճառաւ :

Անկարելի է արդարեւ հասկընալ թէ՛ բոնիակցելու համար իրարու հետ համաձայնած մարդիկը ինչպէս կը շարունակեն իրարմէ գաղանիքնիր պահել նոյն համաձայնութեան մանրամասնութեանց վերաբերմամբ, և այդ կերպով իրարու աղբեցութիւնը չեղբացնել : Կը կարծուի թէ՛ Մ. Նահանգներն ալ իրենց հաւանութիւնը յայտնած են ծանուցագիրը ստորագրելու համար :

— Բէքինէն հեռագրի մը համաձայն ամերիկացի զինուոր մը որ կորսուած ջորիներ կը փնտռէր, արագահարուած թնդանօթ մը գտեր է, իսկ յաջորդ օրն ալ

4 հրացան և 11,000 փամփուշտ : — Չինական Թաօթիսին օտար հիւպատոսութեանց ծանուցեր է թէ, արքայական գերդատանը վերջնականապէս որոշած է Բէքին չի վերագառնալ խաղաղութիւն չի գոյանալէն առաջ :

— Նինկ-Քօի մէջ նորանոր խառնակութիւններ տեղի ունեցեր են : չինական զօրքերը շրջկուեր են խաղաղութիւնը վերահաստատելու համար :

— Լիհտեն-Չանկ ինֆլուէնցանքն բռնուեր է, և գերմանական դեսպանատան բժիշկը զայն կը խնամէ :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Եօհաննէսպուրկի մէջ լուր տարածուած է թէ Պօէր ժէնէրալ Տէրաշէյ անգլիացի ժէնէրալ Քլիմէնտսի բանակին մօտ կը գտնուի և շուտով գուցէ այդ երկուքին միջև ճակատամարտ մը տեղի ունենայ :

ժէնէրալ Պրէնշ ստուար հեծելազօրքով հասեր է Քրիկերստօրպ :

— Դեկ. 8ին Լօնտօնէն կը հաղորդեն թէ՛ Հիւսիսային Քարի մէջ գործերու վիճակը հետզհետէ լուրջ կերպարանք կատանայ : Կը կարծուի թէ 2000էն աւելի Պօէրներ արդէն մտած են այդ գաղթափայրի մէջ : Կը վախցուի թէ պօէրները Օրանժը անցնելէ յետոյ, գաղթական Հոլլանտացիները անոնց հետ միանան և այդպիսով ապստամբութիւնը ծաւալուի : Շատ կը ցաւին կանոնաւոր հեծելազօրք չըլլալուն համար, և կը պահանջեն որ Անգլիան իր տրամադրելի հեծելազօրքը ամբողջն ալ Աֆրիկէ շրջէ :

— Լօրտ Քիշնէր Բրէթօրիայէ կը հեռագրէ թէ երկու վաշտ Պօէրներ Օրանժը անցեր են : Անգլիական զօրքերը զանոնք կը հետապնդեն շրջապատելու նպատակով : Երկաթուղիի գիծը պաշտպանուած է : Լօրտ Քիշնէր կը յուսայ որ շուտով դէպի հիւսիս պիտի քշէ : Ըստ երեկոյեան լրագիրներու Պօէրներու հոսանքը դէպի Քար, կը սաստկանայ և արդէն Կօլսպերկ գաւառը գրաւած են :

ՉՈՒԱՐԱՆ „ՎՈՒԹԷՆՊԵՐԿ“

(Տպագրական տառերու)

Կարծր Անտաղ . Ողիղ Կարգ Հաշտար քարձրաքիւն

Ամէն լեզուէ տպագրական տառեր և զանազանք՝ գոհացուցիչ գնեցողի Հասցէ՝

Fonderie typographique, Gutenberg, Sophia, Rue Graff Jgnatieff № 3, 21—25

Печатница Хр. Н. Войниковъ—Варна,